ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEF1-99C6-4003-BAE9 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/10836/02/24

ՈՐՈՇՈՒՄ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆԳՈՐԾԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

25.11.2025թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանիընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ՝ նաև Դատարան), քննարկելով ըստ հայցի «Իվաֆարմ» ՍՊԸ-ի (այսուհետ՝Հայցվոր) ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվանուսուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատասխանող)՝ գնումներիգործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելումասին 13.11.2024 թվականի թիվ 1196 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

Հայցվորի ներկայացուցիչը հայց է ներկայացրելդատարան ընդդեմ

Պատասխանողի՝ գնումների գործընթացինմասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 13.11.2024թվականի թիվ 1196 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացվել է 13.12.2024 թվականին, կազմվել էթիվ ԵԴ2/10836/02/24 քաղաքացիական գործը, որը 13.12.2024 թվականին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանիընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Սաֆարյանին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Ա. Սաֆարյան) 19.12.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցադիմումը կրկին ներկայացվել է 30.12.2024թվականին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Ա. Սաֆարյան) 09.01.2025 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Պատասխանող ՀՀ առողջապահությաննախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուսուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ինկողմից 16.01.2025 թվականին ներկայացվել է հայցադիմումի պատասխան:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Ա. Սաֆարյան) 21.01.2025 թվականի որոշմամբ հայցի ապահովման միջոցկիրառելու մասին միջնորդությունը բավարարվել է:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Ա. Սաֆարյան) 30.01.2025 թվականի որոշմամբ որոշվել է գործըքննել գրավոր ընթացակարգով և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր է նշանակվել21.02.2025 թվականին:

Թիվ ԵԴ2/10836/02/24 քաղաքացիական գործը 24.11.2025թվականին վերամակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին՝ հիմքընդունելով Բարձրագույն դատական խորհրդի 10.11.2025 թվականի թիվ ԲԴԽ-81-Ո-145 որոշումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդհոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե սույն գլխովառանձնահատկություններ սահմանված չեն, ապա Համակարգի միջոցով իրականացվողգործողությունների վրա տարածվում են սույն օրենսգրքի ընդհանուր կանոնները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդհոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանում գործի քննությունը, իսկ վերաքննիչ դատարանում բողոքի քննությունն անցկացվում են դատարանի անփոփոխ կազմով, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի: Դատարանի կազմը փոխվելու կամ կազմում փոփոխության դեպքում կայացվում է գործը (վերաքննիչ բողոքը) վարույթ ընդունելու մասին որոշում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդհոդվածի 5.1-րդ մասի համաձայն՝ դատարանի կազմը փոխվելու կամ դատական կազմում փոփոխության դեպքում գործը (վերաքննիչ բողոքը) վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը որոշում է կայացնում գործի (վերաքննիչ բողոքի)

քննությունն սկզբից սկսելու կամ գործի (վերաքննիչ բողոքի) քննությունն ընդհատման պահից շարունակելու մասին, բացառությամբ առաջին ատյանի դատարանում գործի դատաքննությունն ավարտված լինելու դեպքերի: Գործի դատաքննությունն ավարտված լինելու դեպքում առաջին ատյանի դատարանը գործը վարույթ ընդունելու հետ միաժամանակ որոշում է կայացնում գործի քննությունն սկզբից սկսելու կամ գործը դատաքննության փուլից վերսկսելու մասին:

Տվյալ դեպքում հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատասխանող ՀՀ առողջապահությաննախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուսուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է հայցադիմումի պատասխան, ինչպես նաև գնման գործընթացի հետկապված ապացույցները, հետևաբար Դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործը պետք է ընդունել վարույթ և գործի քննությունը շարունակել ընդհատման պահից:

Վերոգրյալը հիմք ընդունելով և արձանագրելով, որսույն գործը քննվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխովսահմանված կանոններով, և սույն դեպքում առկա չեն գործը դատական նիստում քննելումասին՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածով նախատեսվածհիմքերը, ուստի Դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ2/10836/02/24 քաղաքացիական գործը պետք է քննել գրավոր ընթացակարգով՝ եզրափակիչդատական ակտի հրապարակման օր նշանակելով 26.12.2025 թվականին:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀքաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Ըստ հայցի «Իվաֆարմ»ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվանուսուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի՝ գնումների գործընթացին մասնակցելուիրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 13.11.2024 թվականի թիվ1196 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործն ընդունել վարույթ:

2. Թիվ ԵԴ2/10836/02/24 քաղաքացիական գործը քննել գրավոր ընթացակարգով ևեզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակել 26.12.2025 թվականին՝ հրապարակելով դատական իշխանության պաշտոնական կայքում:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից ևենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Digitally signed by YERITSYAN
SARGIS 3207830072

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝
cabinet.armlex.am